

ԲԱՆԱՍՏԵՂԱԿԻ ԺԱՄՄՅՈՅՅՅԸ

(Նուէր երաժիշտ պ. Յովսէփ Տէր-Դաւթեանին):

Ծնուելուց յետոյ չիմացայ թէ՛ ինձ ուր տարան: Միայն՝ երբ մի օր քնից սթափուեցի, տեսայ, որ ընկած եմ մի ապակիազարդ վանդակի մէջ:

Ինձ հետ ապակու երեսով շարէշար ընկած էին բազմաթիւ ժամացոլցեր: Ամենքս լուռ-մունջ նալում էինք գէպի դուրս: Մարդիկ անդադար անցուդարձ էին անում, կառքերը ծանր ու բարակ դղբդոցով յետ ու առաջ էին սլանում. ես ոչինչ չէի հասկանում, թէպէտ հասկանալու էլ կարիք չունեի: Մարդիկ յաճախ կանգնում էին մեր պատուհանի առաջ, երկար դիտում. թէ ինձ՝ թէ իմ ընկերներին:

Մի օր, բայց չեմ լիշում ինչ օր էր և չէի կարող լիշել, որովհետեւ իմ սլաքները կանգնած էին և ես ոչ ժամերի թիւը գիտէի, ոչ օրերի: Դնչւիցէ, մի օր էր, երբ մի երիտասարդ պարոն մօտեցաւ մեր պատուհանին, կանգ առաւ մեր գիմաց ու սկսեց զննել ամենքիս: Ես նկատում էի, որ նա գլխաւորապէս հայեացքը սեւեռում էր մերթ ինձ վերալ, մերթ իմ երեսին կախած մի փոքրիկ կտոր թղթի: Նա վերջապէս հեռացաւ և քիչ ժամանակից յետոյ ինձ վերցըին ու մօտեցըին նրան: Ուրեմն նա ներս է մտել նա դիտում էր ինձ, ես էլ նրան:

Նիհար, փոքրիկ սևաթոյր մօրուսով, գեղեցիկ, վառվուն աչքերով մի երիտասարդ էր նա: Եւ որքան լոռութեամբ նալում էր ինձ վերալ, պարտում էր ինձ իւր քընքոյշ ձեռքի մէջ, յաճախ շօշափում երեսիս կպցրած թուղթը, նոլնքան և աւելի շատ խօսում էր մեր ընդհանուր

բանտի տէրը։ ԱՇ, նրա դէմքը երբ մտաքերում եմ, ոչ
միայն զգուռմ, այլ միանդամայն սարսափում եմ, սառ-
սոռում։

Նա մի անսիրտ ծերունի էր, երկայն, ճերմակախառն
մօրուսով, կնճռոտ, նեղ ճակատով, փոքրիկ աչքերով և
արծուանիշ, սրածալը քթով։ Ակնոցները քթի վերալ սա-
զեցրած, կեղծաւոր ժպիտը շրթունքին առած, նա նո-
րեկ պարոնի առաջ անվերջ գովեստներ էր թափում իմ
մասին, — առնում էր ինձ իւր ձեռը և կարծես ինձանով
անկեղծօրէն զմալլուած շրթունքների ծալրերը հասցը-
նում էր մինչև տկանջները, նայում ինձ, մեկնում երի-
տասարդ անծանօթին և նոր նոր գովեստներ հեղեղում
իմ հասցէին, — գովեստներ, որ կեանքիս մէջ երբէք լսած
չէի նրանից։ Եւ նրանից ոչ թէ գովեստ չէի լսել, այլ
ես լաւ գիտէի, որ նա ինձ սրտանց ատում էր և հաշ-
ում ամենավատից վատը։

Ո՞րքան արժէ, հարցրեց նորեկ պարոնը մի թախ-
ծալի, սակայն քաղցր ձայնով։

Էժան, ճ, շատ էժան, աւելացրեց ծերունի բան-
տապետս լսիրը հալեացքը շեշտակի սեւեռելով անծա-
նօթի աչքերին։

Ուրեմն ո՞րքան։

Տասնեւութ ռուբլի։

Առաջին անգամն էի իմանում իմ արժողութիւնը։

— Տասն և ութ ռուբլի։ — աշա թէ ինչ եմ ես։

Բայց ոչ թէ ալդքան, այլ աւելի քիչ։ Տես՝ անծա-
նօթ երիտասարդի շրթունքներին խաղում է հեգնա-
կան ժպիտ։ — ես հասկացալ, նա համաձայն չէ ալդ
գնին։ Աշա նա շարժեւում է, ուրեմն... նա թողնում է
ինձ միւնոյն բանտում, միւնոյն անարդ բանտապետի
մօտ։

Բայց ես ո՞րքան էի ուզում ալդ նեղ բանտից դուրս
գալ. ախ, գնալ, ազատ լինիլ, նոր աշխարհ տեսնել, նոր
կեանք, նոր մարդիկ, նոր տէր, վերջապէս տարբեր օ-
րեր ու մինչև իսկ տարիներ, ԷՇ, իմ վիճակն այլ էր։

Երիտասարդ պարոնը տխուր, սակայն քաղցր հա-
լեացքը ձգեց ինձ վերալ, երկու ըոպէ ակնապիշ նալեց

ինձ և ապա «ոչ, թանկ է» ասելով, կամեցաւ դուրս դնալ:

— Ծերունի տէրս սկսեց իւր սակարկութիւնը. կաց, կանչեց նա, մի գնար, տուր որքան կամենում ես — տուր տասն ու եօթը, տասն ու վեց, հմմ, տասն ու հինգ.... երիտասարդը շէմքում կանգնած՝ մի ձեռը արդէն տարել էր դէպի խանութի դուռը:

— Հեռու էք, շատ հեռու, չեմ կարող, ասաց նա: Դէհ ասա — որքան ես տալու, բայց գետես, որքան լաւն է, որքան գեղեցիկ. գոչեց շաղակրատ ծերունին և աւելացրեց. — դէհ, լաւ, տասն և չորս տուր, հմմ...

Խնչեիցէ, երկար սակարկութիւնից լետոյ, երիտասարդն առաջարկեց ութ ուռելի և որքան ծերունին առեց, գովեց. ծուռեց աջ և ձախ, նա ոչինչ չաւելացրաւ:

Վերջապէս ծերունին համոզուեց:

Որքան ուրախութիւն: — Ես դուրս եմ գալիս բանտից: Թէպէտ այդ ըոպէին զգացի և մի թեթև տիշրութիւն ընկերներից բաժանուելու վերաբերմամբ, բայց և այսպէս ուրախութիւնս յաղթող եղաւ:

Երիտասարդը հանեց գրպանից թղթէ մի փոքրիկ փաթեթ, թափեց ծերունու առաջ չորս թղթէ ու մի բուռն պղնձէ և երկաթէ գրամներ: Ծերունին այդ բուռն առնելով մեկնեց ինձ նրան, բաժանուելուս համար առանց մի ցաւ, առանց մի վիշտ յայտնելու ճամաց շատ էժան եղաւ, այս ասաց ու ինձ յանձնեց նրան: Երիտասարդն առաւ ինձ, մի հայեացք ևս ձգեց ինձ վերալ, փաթաթեց թղթի մէջ և գրաւ իւր ծոցում: Ես ընկալ ուղիղ նրա կրծքի վերալ: Աստուած իմ, ինչե՛ր չըլւեցի ես այդ կրծքի տակից: — Ինձ թւում էր թէ այնտեղ որոտում են ամպեր, փալլատակում է երկինք, թընդում են ամպրոպի ձախներ և երբեմն կարծես խոխոջում են առուներ, երգում, կարկաչում սոխակ ու արտոյտներ, երբեմն էլ ինձ թւում էր թէ այնտեղ թեթև զեփիւոն է փչում ու նրա հետ վարդեր ու մանուշակներ սօսափում, իսկ երբեմն կարծես ալդտեղ համերգ է կատարւում, օհներգի ոգեշշունչ ձալներ լաւում: Վերջապէս որքան ժամանակ ես նրա կրծքի վրալ էի լինում միշտ

միւնոյն ձալներն էի լսում, միւնոյն ուրախ և տխուր երգերը, միւնոյն փոթորիկն ու հեղիկ հովերը:

Խանութից դուրս գալուց քիչ ժամանակ չանցած նա ինձ հանեց ծոցից, նայեց ինձ վերալ և դրեց մի սեղանի երեսին: Իմ շուրջը թափուած էին անթիւ, անհաշիւ թղթեր, գրքեր, գրիչներ, թանաքաման, զանազան մանր իրեղէններ, թարմ ու չորացած ծաղիկներ և ծխախոտ ու ցիրուցան գլանակներ: Նայեցի հեռու, նայեցի իմ չորս կողմը և ոչ մի եզրակացութեան չեկալ, չհասկացալ ալդ իմ նոր տէրը ինչ մարդ է, ինչ արհեստ կամ ին, աշխատանք ունի: Նրա սենեակը մեծ չէր և ոչ շքեղ զարդարուած: Երկու պատուհաններ նայում էին դէպի դուրս, դէպի կապոյտ երկինք: Սարերով շրջանակուած հորիզոնը միշտ ժպտում էր նրան: Կանաչ բըլուններ, ծառեր, ծաղիկներ, դաշտեր, ձորեր, ամենքն էլ երեւում էին ալդ երկու պատուհանից: Ցերեկն արևեն է իւր ճառագալթներն սփռում սենեակի ներսը, գիշերը լուսինն է ժպտում իւր արծաթավառ շողերով: Սենեակի զարդարանքը կազմում են մի մահճակալ, մի սեղան, երկու երեք հինաւուրց աթոռներ ու մի մեծ գզրոց, լի անթիւ գրքերով: Դրքեր, ախ, նըքան գրքեր կալին այդտեղ: Նա մի երկու անդամ առաւ ինձ իւր ձեռը, նայեց, նորից զննեց և դիտեց, ապա կրկին գրաւ սեղանի երեսին, հայեացքը սեռուեց մի կէտի, լինուեց կը-ռանը և սուզուեց մտքերի մէջ:

Նա մտածում էր, սակալն ես չգիտէի ինչ էր մըտածում:

Ա՛յս որքան գրաւիչ էր նրա դէմքը: Խնչալիսի հրապուր էր խաղում նորա երեսին, որ ժպտում էր երկու կրակոտ, սևաթոյր աշքերի հետ: Եւ ինչ ժպիտ, ինչ քաղցրութիւն: Ո՞րքան դիւթիչ էր նրա թախծալի հալեացքը, ո՞րքան գեղեցիկ խոհերում ծրարուած նրա լալն ճակատը: Մտքերից սթափուելով, նա առաւ գլանակ վառեց և սկսեց անցուգարձ անելով ծխել: Այդ միջոցին ներս մտաւ մի երիտասարդ պարոն ու հարցրեց նորան «պարոն Զէտը դուք էք»:

Այո՛, պատասխանեց նա:

Զէտ, ալսպէս էր նրա անունը ուրեմն նրա մասին խօսելիս ես ևս Զէտ կանուանեմ նրան:

• Զեղանից կամենում եմ գրքեր գնել. ասաց նորեկը: Հրամալեցէք, պատասխանեց Զէտը: Ուրեմն նա գրավաճառ է, գրավաճառ: Վերջապէս ես իմացալ նրա ինչ լինելու: Լուռ, տխուր գէմքով նա գզրոցից հանեց մի քանի գրքեր և դարսեց սեղանի երեսին:

Ո՞րքան արժէ հարցրեց նորեկը: Հինգ ոուբլի—պատասխանեց Զէտը, ոչ ժպտալով, ոչ որևէ այլ խօսք աւելացնելով:

Հինգ ոուբլի, կրկնեց նորեկը, մատը շրթունքին դրած մի ըոպէ մտածեց, ապա ժպիտն առած շրթունքին ասաց. «Ես հինգ ոուբլի կտալի, բայց հաւատացէք, փող չունիմ, զիջումն արէք»:

Տուէք, որքան կարող էք—ասաց Զէտը, նստեց և հայեացքը սևեռեց, ինչ էք կարծում, ում վերալ—դարձեալ ի՞նձ, ի՞նձ վերալ:

Նորեկը հանեց երեք ոուբլի, առաջարկեց նորան: Նա ընդունեց առանց մի խօսք արտասանելու:

Նորեկն առաւ գրքերն ու գուրս գնաց: Ես մնացի զարմացած: Այդ ձեմ առևտուր կեանքումս չէի տեսել: Ակամալից լիշեցի իմ նախկին տէրը — այն անարդ ծերունին, որ մի որևէ ապրանք վաճառելիս խօսում էր ամբողջ ժամերով, սուտ տեղից երդում Երկնքով, Աստուծով և հազար մի նուիրական անուններով: Սակայն բոլոր խօսքերը սուտ, սուտ:

Գիրք գնողը գնալուց լետով, Զէտը բարձրացաւ տեղից, կանգնեց պատուհանի առաջ, հայեացքն առաւ կապոյտ երկնքին և սկսեց մտածել: Ա՛խ, ինչ էր նա մտածում: Ես որքան էի ուզում իմանալ, բայց չկարողացալ, հեռու էի նրանից: Նա երեսը լետ դարձրեց, մի խոր հառաջ արձակեց ու դարձեալ սկսեց չորս պատերի մէջ տեղ լետ ու առաջ ճեմել Ռոպէներ չանցած, լանկարծ դուռը բացուեց: Ներս մտաւ մի անծանօթ մարդ: Կարմրադէմ, մսալից ալտերով, հաստ փորով, լայն վեր ու վար հաստացած շրթունքներով և լպիրշ հայեացքով:

Նա մի անախորժ ձայնով «բարի օր» ասաց, և, առանց Զէտի հրաւերելուն, նստեց սենեակի մի անկիւնում ընկած արկղի վերայ, ձեռները դրաւ ծնկներին ու դարձաւ Զէտին.

«Հմմ, Զէտ աղպէր...

Ի՞նչ կար, հարցը Զէտը:

Ողջութիւն: Է՛, ձեզ մօտ ի՞նչ կար:

Ի՞նձ մօտ ոչինչ, պատասխանեց Զէտը և տիրամած ձայնով աւելացրեց. գուք երևի եկել էք սենեակի վարձն ստանալու:

Այս, այս, ասաց հաստափոր պարոնը և մի լկոտի հրճուանքով շարունակեց. ախր դէհ ժամանակն է հօ, գիտէք ես էլ խեղճ եմ, հացի փող չունիմ. ի՞նչ անեմ: Սպասեցէք, եթէ կարելի է, մի ամիս ևս:

Ոչ, ամենսին չեմ կարող, գոչեց հաստափորը, դէմքը խօժուելով և շարունակեց կէս մուրացկանի, կէս ստիկանի ձայնով.

Զէ, չէ մի ասէք, չեմ կարող, վճարեցէք, իսկ եթէ փող չունէք, ծախեցէք ալդ անպիտան գըքերը, որոնք թերեւս մի կոպէկ էլ չարժենան, ծախեցէք ձեր հագուստը, վերջապէս ի՞նչ ուզում էք արէք, միայն թէ ի՞նձ փող տուէք, ես էլ կարիք ունիմ, հաց պիտի առնեմ:

Աստուած իմ, ի՞նչի էր նման ալդ ժամին Զէտի երեսը: Իժգունած դէմքը այնպէս խաղաղ, այնպէս դիւթիչ հայեացք էր ստացել, որ նա ալդ ժամին նմանւում էր մի գեղընական պրարածի: Աչերն ակնապիշուղղել էր իւր գըքերին և լուռ ու մունջ լսում էր ալդ անիրաւ մարդու անարգ խօսքերը. Նա մի խոր հառաջ արձակելով, մօտեցաւ սեղանի երեսին ընկած թըղթադրամին, առաւ, մեկնեց հաստափոր պարոնին և թախծալի ձայնով ասաց. «Եթէ քաղցած էք, առէք, տայ Աստուած, որ մի օր ալդպիսի քաղցից լազենաք»:

Հաստափորն առաւ գրամը, կոխեց գըպանը և իսկոյն փոխելով դէմքի գծերը, մի կեղծ ժպիտ առաւ զըթունքներին, փոքր ի՞նչ էլ վիզը ճկեց և ողորմելի ձայնով դարձաւ Զէտին. «Եմ նեղանաք, ես գիտեմ գուք բարի մարդ էք, հաւատացէք, ձեզ շատ և շատ սիրում եմ,

Ես ալնքան անիրաւ չեմ, որ ձեզ նեղութիւն պատճառ ում, իմ տունը ձերն է, ապրեցէք, ինչպէս ապրել էք մինչև օրս, շնորհակալ եմ ձեզանից, շատ շնորհակալ:

Ասաց և գուրս գնաց:

Զէտը լուռ էր, նա ոչինչ չխօսեց և ոչ մի պատասխան անգամ չտուաւ. Միայնակ, լուռ նստեց սեղանի մօտ դարձեալ գրիչն առաւ ձեռը առ բոպէ սուզեց մտածմունքի մէջ. Ալդ միջոցին աչքերից թափուող աղի կաթիլները ոռոգում էին նորա թոշնած ալտերը:

ԱՌ, ի՞նչ մարդիկ, ի՞նչ մարդիկ կան:

Ես նոր նոր էի ուսումնասիրում մարդկանց:

Մէկը, որ ալնքան հէզ է, բարի, համակրելի և ալնքան աշխատաւոր ու մտածող—արտասւում է, իսկ միւսը, որ մի կատարեալ գազան է, մի լալիրշ աւազակ—հրճում է, ինցում ու ուրախանում:

Զէտն աշերը սրբեց, հառաչելով առաւ ինձ, դըրաւ ծոցումը, դարձեալ ուղիղ կրծքի վերալ և դուրս դնաց:

ԱՌ, եթէ իմանալիք էլ ինչեր լսեցի նրա կրծքի տակից: Կարծես որոտում էր, կարծես մի ահագին գետ էր վշշում կամ սաստիկ հեղեղ էր թափում:

Նա գնաց և վերջը ներս մտաւ մի փոքրիկ սենեակ: Ճանապարհին գլուխ փոքր ինչ հանել էի ծոցից և ալդտեղ ամեն ինչ տեսալ: Երկու փոքրիկ երեխաներ էին նստած, որոնց տեսնելով նա ժպտաց, նստեց նրանց մօտ և դարձեալ գրեթե հանեց ու գրեց առաջը. Ալդ միջոցին նրա կրծքի տակ հեղեղը կարծես սպառուեց, որոտմունքը հետզհետէ տեղի տուին բարակ ու քաղցը երգեհոնի, կարծես գետերի վշշոցը փոխուեց աղբիւրի խորոշի և բարակ սիւգերի վզզոցի:

Նա երկար կարդաց ալդ երեխաների հետ: Ես չեմ լիշում ինչ կարդաց, ինչ գրեց, վերջը ալդ պարապմունքը երկու ժամ տևելով, բարձրացաւ տեղից ու դուրս գնաց:

Բակի գոան շէմքում կանդ առաւ, ճակատը սրբեց և սկսեց մտածել:

Ես ընկած էի ինչպէս ասացի, ուղիղ նրտ կրծքի

վերայ և ճիշտ ալն կողմում, ուր ընկած է նրա սիրտը:
Նրա մտքերը փոքր ինչ իմացար. «ո՞ւր գնամ, ասում էր
նա ինքն իրան, հաց չկայ, փողն էլ անիրաւը տարաւ,
ուր գնամ, բնչպէս քաղցած եմ, ա՞խ, այս բնչ վիճակ
է, ինչ ճակատագիր, Աստուած, ինչու ալսքան դառն
է, ալսքան փշոտ...»

Նա անդադար վարանում էր: Սիրտն ալնքան վա-
ռուել էր, որ քիչ էր մնում պայմէ: Հոգւոյ հպարտու-
թիւնը, պատուասիրութիւնը, քաղցը, վիճակի դառնու-
թիւնը կատաղած ալիքների նման ծփծփում էին սրտի
թելերին:

Այսպէս դառն մտքերի մէջ սուզուած, քալերը
շարժեց դէպի առաջ:

Ճանապարհին նրան հանդիպեցին երկու գեղեցիկ
կանալք:

Պարոն Զէտ, գոչեցին նրանք:

Զէտը լետ նալեց, ձայնակցեց նրանց, մօտեցաւ ու
մի բռնազբօսիկ ժամանակ սեղմեց նրանց ձեռները, հար-
ցրեց նրանց առողջութիւնը և ուր գնալու տեղը:

Գեղեցիկ կանալք աջ ու ձախ պաշարեցին նրան և
խնդրեցին գնալ իրանց մօտ ու միասին ճաշել:

Այդ խնդիրը Զէտը չմերժեց: Զանազան խօսակցու-
թիւններով զբաղուած կամաց կամաց գնալով հասան
տուն և մի շքեղ ընդարձակ սենեակում սկսեցին ուրախ
խօսել, ծիծաղել ու զուարճանալ: Կանանցից մէկը նըս-
տեց մի մեծ գեղեցիկ դաշնակի մօտ, մատները դրաւ
ստեղունքի վրայ, շարժեց լետ ու առաջ, աջ ու ձախ
և ձայներ, Աստուած իմ, ինչ ձալներ, ինչ երգեր հնչե-
ցրեց:

Զէտը իսպառ փոխուեց, նա դարձաւ մի ուրախ
պատանի: Ծիծաղում էր, պարում, երգում և անդադար
խօսում: Խօսում էր, բայց որքան ճարտար, որքան քաղ-
ցը ձայնով: Ա՞ի, ինչ լեզու է, ինչ բառեր, որքան գե-
ղեցիկ, որքան դուրեկան:

Եւ ես միշտ նկատել եմ, որ նա խօսելիս երբեմն
լսողների աչքերից արտասուք է քամում:

Սակայն որքան նրա մօտ մնացի, նրա բնաւորու-

թիւնը չկարողոցալ մի կերպ որոշել։ Երբեմն տեսնում էի միայնակ նստած և ինչպէս մի փիլխոփալ, լուռ, անդորր մտքերի խորքերը սուզուած։ Ալդ ժամանակ միայն գրիչն էր խաղում նրա ձեռքին։

Տեսնում էի երբեմն էլ ինչպէս ալէտանջ ծերունի ճակատը ծալքերով ծածկուած և թէ մենաւորութեան մէջ ու թէ մարդկանց՝ հետ խօսելիս պահում իրան ծանրախոհ, տրտում ու հոգալից։ Տեսնում էր նրան և ինչպէս վշտահար մալր, դէմքը թախծութեամբ քողարկուած, մըրիկը թանձրացած յօնքերին և կախուած աչքերի վերալ։ Եւ երբեմն նա տինքան փոխւում էր, որ դառնում էր մի խնդավառ մանուկ։ Նաղում էր կայտառ շարժուածքով։ Խալում էր ծաղիկների և թուչուններս հետ, խօսում էր աղբիւրների և առուակների հետ, երգում էր արշալուսին և վերջալուսին, երգում արևին, լուսնին ու աստղերին։

Եւ առհասարակ ես նկատել եմ, որ նա անչափ սիրում էր սատեղազարդ երկինքը, ժապտահայեաց ծաղիկները և խօխոջիւն առուակները։ Նրա սեղանից ընդմիշտ ծաղիկներն անպակաս էին լինում։ Ալդ բոլորը բերում էին գեղաչեալ տիկիններն ու օրիորդները։

Կարճ ժամանակ անցաւ ալդ օրից։

Մի օր նա սաստիկ տիսուր էր. իսկ երբ տիսրում էր սկսում էր անվերջ վարանել։ Մերթ նսառում էր, մերթ կանգնում, գլանակներն իրար ետևեց վերջացնում ու մէկ մէկ յատակին զարնում։ Նալում էր պատուհանից դուրս, նայում էր երկնքին, ստէպ ստէպ հառաջում ու երբեմն ինքն իրան խօսում։ Ում դիմեմ, ասում էր նա, էլ Բնչ միջոց ունիմ. տան վարձ, հաց, հագուստ, ախ... այս ասելով նա հանեց ինձ ու մի թախծալի հալեացք ձգեց ինձ վերալ։

Ալդ միջոցին ներս մտաւ մի պարոն, գեղեցկադէմ, լի ալտերով, ուրախ և ժպտալից դէմքով։ Նրա կըրծքին փալում էին աղամանդէ կոճակներ, ոսկէ շղթալ,

ատներին շողշողուն մատանիներ, իսկ ձեռին արծաթէ
եռնափալու:

Կարդացէք. ասաց նա ժպտալով բարեելով:

Ի՞նչ, հարցը Ձէտը:

Ալսօրուալ լրագիրը:

Ոչ, ի՞նչ կար:

Օ՛, ի՞նչ գովասանքներ ձեր մասին, ի՞նչ խօսքեր
նի, որքան ուրախ եմ, որքան բազդաւոր: Պ. Ձէտ, հա-
ատացէք, անկեղծ եմ ասում, ձեզ հետ իմ ունեցած
անօթութիւնը ինձ համար մեծ պատիւ եմ համարում:

Ենորհակալ եմ, ասաց Ձէտը մելամաղձոա ձալնով:

—Պայծառ աստղի պէս շողում է, շարունակեց նո-
եկը, նստած դիրքն ու դէմքի գծերը փոխելով, Ձէտի
նունը մեր զրականութեան երկնակամարի երեսին,
րա դրիչն բեղմնաւոր է, տաղանդն ուժեղ, կարճ ա-
լագալում նա մեր պարծանքը կըլինի: Ճիշտ խօսքեր
ն, պ. Ձէտ, ճիշտ:

Ձէտը ոուզուել էր մաքերի մէջ, ոչինչ չէր խօ-
ում, իսկ ես նորեկի խօսքերից ոչինչ չհասկացալ:

Ի՞նչպէս, ուրեմն Ձէտն ուրիշ մարդ է, ուրեմն
քավաճառ չէ, եթէ ալդպէս է, անշուշտ նա գիրք լո-
ինող է: Ե՛հ երևի ստորգը վերջը կիմանամ:

Իուք տխուը էք, պ. Ձէտ, ասաց նորեկը:

Ալժ, պատասխանեց նա մի թախծալի հառաջով:

Ինչու:

Չգիտեմ:

Ասացէք ինդրեմ, գուցէ ձեր տխրութիւնը ես պա-
տել կարողանամ:

Եթէ ալդպէս է, խօսեց Ձէտը կիսալոլզ ձալնով՝
եղ կասեմ ուրեմն.—տուէք ինձ մի քանի ոուրվի, իսկ
ետոյ ես ձեզ կվերադանեմ:

Նորեկի դէմքի արտալայտութիւնը փոխուեց: Նա
ուրջ հայեացք առաւ և մի բռնի ժպիտով պատասխա-
եց. ախ, պ. Ձէտ, ներեցէք ինդրեմ, այժմ ես չունիմ,
ուցէ մի ուրիշ անգամ ես կարողանամ ձեզ բաւակա-
ռութիւն տալ, ախ ինչքան ափսոսում եմ, որ չունիմ
երեցէք ինդրեմ, ալսպէս ասաց նա, կամաց կամաց տե-

զից բարձրանալով, գլխարկն առաւ և, «ցտեսութիւն» ասելով, գուրս գնաց:

Կպիրշ փարեսեցիներ, ասաց Զէտը և յուղուած սըրտով դարձեալ սենեակի մէջ սկսեց իւր անհանդիստ անցուգարձը «Աստուած, էլ Բնչ անեմ», կրկին մտածեց նա, կրկին հանեց ինձ, մի խոր հայեացք ձգեց ինձ վերալ և դարձեալ դրաւ ծոցի մէջ ու գուրս գնաց: Ճանապարհին ինչ որ կատարւում էր նրա կրծքի տակ, ալդես ալլ ևս անզօր եմ նկարագրել: Ալժմ էլ ինձ թւում էր թէ այնտեղ ահուելի հրդեհ է գոյացել, թւում էր թէ լսում էի ահեղ ճարճատիւն, կամ կրակի որոդընտոտ ձայներ:

Նա կամաց կամաց գնաց, կանդ առաւ մի խանութի առաջ, կամեցաւ ներս մտնել, բայց փոքր ևս կանդ առաւ և ապա մի խոր հառաչ արձակելով, ներս մտաւ. բայց ի՞նչ խանութի. — մի ահագին շտեմարան, ամեն բարիքներով լիքը: Խանութի մի կողմում նստած էր մի հաստափոր պարոն, լայն, կարմրավառ դէմքով. թանձը ընչացքներով ածիլուած ալտերով և ապշած աչքերով:

Ա՛, պ. Զէտ, բարնվ, Բնչպէո էք. Բնչ նորութիւն ունիք, ասաց հաստափոր տէրը, սեղմելով Զէտի ձեռքը:

Նորհակալ եմ, պատասխանեց Զէտը, տխուր և լժախծալի ձայնով:

Հաստափոր պարոնը սկսեց մի քանի անկապ հարցեր տալ ու իւրաքանչիւր խօսք նա դեռ չվերջացրած հըռհոռում էր: Իսկ Զէտը ալդ միջոցին կարծես փշերի վերալ էր կանգնած: Նա մի րոպէ դադար չէր, զգում, անդադար վարանում էր: Ա՛խ, ալդ տարտամ միջոցին լիշեցի այն օրերն ու գիշերները, որ նա միախնակ նստած իւր սենեակում իւր տնբաժան ընկեր գրիչը ձեռին գըրում էր անդադար, զարդարում էր լուռ, անխօս թըղթի երեսները զանազան խօսքերով ու մտքերով: Ալդը ըոլոր տոկունութիւնը, ալդ չարչարանքն ու նեղութիւնները լիշեցի և զարմացայ, որ այնքան տանջանքը ոչ մի բանով չպատկուած, նա ալժմ կանգնել է ուղիղ վըշերի վերալ: Նրա հպարտ հոգին սեղմուել էր մի սառնասիրտ հարուստի առաջ. ախ, Բնչքան ցաւալի է ալդ,

Բնչքտն խղճալիի: Նա մի խոր հառաջ արձակելով, դարձաւ հաստափոր պարոնին, և դողդոջուն ձայնով ասաց. «Կ. Տղրուկեան, ձեզ պէտք է խնդրեմ... բայց գեռ խօսքը վերջացրած ալդ Տղրուկեանը դէմքը խոժոռեց և Զէտին ընդհատելով ասաց. «Բնչ էք կամենում»:

Ե՞ս, խօսեց Զէտը, ես կամենում եմ... բայց... ահա այս ժամացոյցը ձեզ մօտ թողնել:

Եւ, նա, Բնչ էք կարծում, Բնչ արաւ. Հանեց ինձ և մեկնեց ալդ լավիրշ հաստափորին:

Ես անվերջ նալում էի Զէտին, իսկ նա իւր հայեացքը մի վարկեան անգամ չէր հեռացնում ինձանից:

Ի՞նչ է սա, Բնչ անեմ հարցրեց Տղրուկեանը, ինձ իւր ահագին ձեռքում խաղացնելով:

Իմ ժամացոյցը, ասաց Զէտը, և, տիրամած աչքերը դարձնելով հաստափոր պարոնին, շարունակեց. ալդ պահեցէք ձեզ մօտ, իսկ այժմ ինձ տուէք մի քանի ռուբլի:

Ո՞րքան էք ռուբում, հարցրեց Տղրուկեանը:

Որքան... Զէտը տատանուեց և կամեցաւ խօսել յանկարծ Տղրուկեանն ընդմիջեց և ասաց. «Երեք ռուբլուց աւելի չեմ կարող տալ»:

Երեք, ես ուժ ռուբլով եմ գնել:

Ա. Այդ միւսնոյն է, այժմ սա միայն երեք ռուբլի արժէ:

Տուէք, ասաց Զէտը և արտասուալից աչքերով վերջին հայեացքը ձգելով ինձ վերալ, հաստափոր պարոնից առաւ երեք ռուբլին և դուրս գնաց:

Տար ինձ, տար, ուր ես գնում, կանչեցի նրա ետևից, բայց նա չսեց, նետուեց դէպի դուրս և միանգամայն անհետացաւ իմ աչքից. Ես զգացի իմ սեբազդը, զգացի թէ՝ ինչ օր, ինչ դրութիւն է սպասում ինձ:

Զէտից յետոյ հաստափոր Տղրուկեանը նորից սկսեց զննել, դիտել ինձ և վերջապէս նա իւր ծոցից հանեց մի սոկէ ժամացոյց և ինձ դրեց նրա տեղը:

Այժմ ես ընկած էի մի նոր կրծքի վերալ, սակայն, Աստուած իմ, ի՞նչ կուրծք, կարծես մի սառած ժայռի վրալ եմ ընկած, չէի լսում, ոչ մի քաղցր ձալն, ոչ մի

շըունչ, միայն չ'ուրանամ, որ մերթ ընդ մերթ լսում էի այնպիսի խռովոց, կամ այնպիսի բովքիւն, որ սար-սափում էի, գողում, վախում: Այնքան տիսրեցի, այնքան մոլորուեցի, որ այդ մութ տեղը այդ գարշելի կրծքին ոլաքներս կանգ առին, ես էլ սուզուեցի խոր քնի մէջ:

Օրերն անցան, բայց չիմացալ որքան օրեր:

Միայն մի անգամ չգիտէի մութ էր, թէ լուս, մի օր լսեցի, որ Տղրուկեանը խօսում էր մի քանի մարդ-կանց հետ: Խառնիճաղանձ ձայնեցից շատ բան չէի հաս-կանում, վասնզի շատ բան էլ չէի սրոշում: Ինչ որ լը-սում էի, ինձ բոլորովին տարօրինակ էր թւում: Իմ պաշտելի Զէտի հետ որքան ապրել եմ, որքան նրա խօսակցութիւններն եմ լսել ալդպիսի խօսքեր երբէք նրանից չէի լսել:

Վերջապէս խօսակցութիւններից իմացալ, որ իմ նոր տէրը — ալդ անպիտան Տղրուկեանը իւր ընկերների հետ գինետանն են գտանւում:

Նրանք պահանջեցին առանձին սենեակ, գինի, ընթըրէք և խաղաթթիթեր: Իմացի, որ բազմեցին սեղանի շուրջը և սկսեցին խաղալ ու խմել: Խաղամիջոցին չի-մացալ ինչ արաւ իմ նոր տէրը, միայն լանկարծ նրա կրծքի տակից լսեցի մի այնպիսի ձայն, որ ես սարսա-փահար եղալ: Կարծես ալդտեղ բացուեցին դժոխքի դըռ-ները և գուրս եկան, սատանաներ բարձրացնելով ի-րանց գարշելի հոհուոցներն ու քոքուոցները: Նոյն ձալ-ները նորից ուժգնացին, որից լետու լսեցի նստածներից մէկի հետևեալ խօսքերը. «Տղրուկեանը թղթերը ուղիղ չէ դարսում: Ձանազան վէճերով ու աղմուկներով նը-րանք իրանց խաղը վերջացըրին և ապա սկսեցին ուտել: Աստուած իմ, ինչեր էր ուտում ալս մի նոր տէրը, ինձ թւում էր թէ ընկած եմ մի ահուելի փոսի եղբին, որի մէջ ուղիղ իմ մօտով թափւում էին ամեն տեսակ ա-ռարկաներ, որոնց իհարկէ ես չէի տեսնում: Այլև կար-ծես այդ կրծքի տակով մի ահագին խողովակ է ընկած ծալը պնդացըրած մի մեծաբերան աղքիւրի: Դինի էր, թէ ջուր, չգիտէի, սակայն կարծում եմ թէ գինի էր այդ, որ գետի նման հոսում էր գէպի նրա անդունդամ փորը:

Երկար ու բարակ ալղակիսի զուարճութիւններ ու լկտի ուրախութիւններ անելուց, միմիանց լարգելով անվալել փողոցալին խօսքերով, տեղից բարձրացան, չգիտեմ ինչ հաշիւներ տուին գինետան, դուրս եկան:

Դուրս գալիս, ուղիղ շեմքում, Տղրուկեանը մի խոր խոմքացնելով, յանկարծ երեսի վերալ վալը ընկաւ: Սաս-տիկ երկիւղից ես իսկոյն գուրս նետուեցի և ինչ. ինձ, ինձ վնասեցի, թենքը պոկուեցին, սլաքներս փշրուեցին, լոեցի և ջարդուած՝ մնացի գետնին փռուած:

Տղրուկեանը հազար մի հայհոլանքներ թափելով ինձ վերալ, փշուրներս հաւաքեց, ածեց գրպանը, գնաց:

Զգիտեմ ուր գնաց, միալն քիչ ժամանակից կանգ առաւ և հարեց զանգակի զսպանակը: Դուրս եկաւ մի պարոն, երսի ծառան, ներս ընդունեց Տղրուկեանին և դուռը կրկին կողպեց:

Տիկինը քնած է. հարցրեց Տղրուկեանը:

Այս, պատասխանեց ծառան:

Թող սատկի, ասաց Տղրուկեանը՝ և աւելացրեց. Եկ, եկ, զորերս հանիր:

Ծառան հետեւեց նրան:

Ներս մտնելուն պէս նա վերարկուն ձգեց մի կողմը ապա փշուրներս հանեց և դրաւ սեղանի երեսին: Ես ալյուհետև բոլորը տեսալ: — Տեսայ և զարմացալ, ահա մի մարդ, որ արժանի է ամեն արհամարանքի ինչ տան մէջ է ապրում, ինչպիսի սենեակում և ինչպիսի զարգերով է նա զարդարուած: Պատուհանները ծածկուած էին շքեղաշուք վարագոլըներով, պատերին ոսկէշող պաստառներ, փալլուն մահճակալ, փառահեղ անկողին և շողշողուն կահ կարասիք: Երկար ժամանակ մտածեցի և դարձեալ ոչինչ չհասկացալ. մտաբերեցի իսկոյն ազնիւ Զէտին, կրկին սուզուեցի մտքերի մէջ և դարձեալ մնացի ապշած ու զարմացած: Բայց միթէ իսկապէս ալսպէս է տնօրինուած մարդկանց համար: Միթէ Տղրուկեանների նման ատելի և զզուելի արարածներ պէտք է ապրեն ալղակիսի շքեղ և պճնազարդ սենեակներում: Եւ միթէ Զէտերի նման պաշտելի անձնաւորութիւնները պէտք է միշտ այնպէս քաղցած մնան:

Ինչևսկցէ: Ամբողջ գիշերը ալդտեղ մնացի: Առաւօտեան զարթնեց իմ զզուելի տէրը, թէլ խմեց, ապա նախաճաշ վակիլեց փարթամ սեղանից, հագնուեց, եկաւ, առաւ ինձ, դբեց գրպանի մէջ և դուրս եկաւ, գնաց խանութ:

Խանութում հանեց ինձ գրպանից և առանց ամաչելու, առանց Խղճահարուելու, ձգեց մի նեղ, մթին արկղի մէջ,—մի բանտ, որ ես դեռ չէի տեսած: Ա՛խ, իմ պատիւը նա միանգամայն ցեխի հետ հաւասարացրեց: Յետու ի՞նչ: Բանտիս գոներն էլ ամուր կողպեց: Ես սոսկացի, մնացի լուռ: Ի՞նչ կարող էի անել: — Ի՞նչ էի արել, մտածում էի ես, ի՞նչ վնաս տուի նրան: Ոչինչ, այո, ոչինչ, ես անմեղ էի, ես մեղաւոր էի միմիալն նրա համար, որ երկար ծառալելուց յետոյ լանկարծ ընկալ, հիւանդացար: Զէ որ ես չէի կարող փախչել նրա ձեռից, չէ որ ես ոչ մի վատութիւն չէի արել և չէի կարող անել, էլ ինչու բանտարկեց ինձ, ինչու մինչև իսկ բանտի դուռն էլ ամուր կողպեց, թողեց ինձ մթութեան և խաւարի մէջ: — Ա՛խ բարբարոսնե՞ր, բարբարոսնե՞ր:



Զգիտեմ, որքան ժամանակ անցաւ ալդ դէպքեց: Մի օր բանտիս դուռը բացուեց և ես լոյս տեսալ, բայց դարձեալ ընկած էի ալդ դաժան Տղրուկեանի ձեռին: Մտածեցի՝ արդեօք պիտի ազատութմ, թէ ոչ: Սակայն ի՞նչ, աւելի անարդ, աւելի անտանելի վիճակ: Եւ ինչ էք կարծում. — ես նորից վաճառուելու եմ լոյս ընկել. Մի ալ պարոն խօսում էր Տղրուկեանի հետ: Երկար խօսակցութիւններից յետոյ ես անցաւ նոր պարօնի ձեռ և իսկոյն մտալ նրա գրպանը:

Ինքս ինձ ուրախացած ճանապարհին ասում էի. հաշա վերջապէս ազատուեցի բարբարոսի ձեռից, ալժմ անշուշտ մի լաւ մարդու ձեռքին կը լինեմ: Բայց ինչու լաւ, ինքս էլ չգիտէի: Մէկի ձեռքին երկար տանջուռ. զը, միւսին, թէպէտ անծանօթ՝ բնազդմամբ լաւ է համարում: Ես էլ ալդպէս էի կարծում, ալդպէս մտածում, սակայն ալդպէս չեղաւ:

Նորագոյն տէրս ինձ գրպանից հանեց մի մուկժ բանտի մէջ դրեց և դուռը կողպեց:

Բանտ, ինչու համար դարձեալ բանտ, մտածում եմ և ոչինչ չեմ հասկանում: — Այդտեղ մթութեան մէջ որոշեցի ինձ պէս մի խումբ անբաղտներ, պատկանող զանազան ցեղերի: — Այդտեղ կալին գդալներ, մատանիներ, ապարանջաններ... Բոլորն էլ տխուր, բոլորն էլ թափակի: Խօսեցի նրանց հետ: Բոլորն էլ լիշեցին իրանց նախկին տէրերին, որոնց մօտ սկզբում գտնուել են և որոնք միշտ քաղցրութեամբ և սիրով են վերաբերուել իրանց հետ: — Ա՛խ, ես էլ մտաբերեցի Զէտին, մտաբերեցի և դարձեալ մնացի անհուն տխրութեան մէջ: Զգիտեմ, որքան օր էր անցել ալդ դէպքից, որքան ամիս, միայն մի օր ես բանտի մէջ լսեցի դրսից մի նոր խօսակցութիւն:

Առ հասարակ, պէտք է ասած, որ մեր բանտը շատ մօտիկ էր մեր տիրօջ: Այնպէս որ նրա խօսքերը ամեն անզամ լսում էի, սակայն ուշագրութիւն չէի դարձնում, որովհետու ինձ համար բոլորն էլ անհետաքրքիր էին:

Իայց այդ օրը լսեցի Զէտի անունը և իսկոյն ուշագրութիւնս լարեցի դէպի դուրս: Մի անծանօթ ձայն խօսում էր իմ տիրոջ հետ այսպէս. «Կարող էք զինել արծաթէ փոքրիկ ժապաւէն և վերան փորագրել, իւր հալրենիքի քրտնաթոր մշակին, մեծանուն բանաստեղծ Զէտին՝ հասարակութիւնից»:

Կարող եմ, ասաց տէրս և յանձն առաւ երկու օրուայ ընթացքում պատրաստել:

Զէտին՝ հասարակութիւնից. այս ինչ է նշանակում: Արծաթէ ժապաւէն, ուրեմն էլ ինչ... նշանակում է նրա համար յարգանք ու մեծարանք են սարգում: Մտաւեցի ես և բանտը առ ժամ մոռանալով, ինքս ինձ ուրախացալ:

Քիչ ժամանակից լետոյ ինձ բանտից հանեցին, փըշ-րեցին և ամբողջովին զետեղեցին մի փոքրիկ ամանի մէջ: Ես դեռ չէի հասկանում, թէ ինչ է կատարւում ինձ հետ, միայն փոքր ինչ յետոյ իմացալ, որ ես ընկած եմ կրակի վրայ և որի չերմութիւնը հետզետէ ինձ լաղթեց: Զերմացալ, այնպէս ջերմացալ, որ ծնուած

օրս իսկոյն միտս եկաւ։ Ապա ամբողջովին ջուր դարձալ, ընկալ մի այնպիսի տեղ, որ փոքրիկ ժապաւէնի ձև ստացալ, Տէրս ինձ առաւ, աչ ու ձախ կողմերս շրտկեց, ուղղեց, գեղեցկացրեց, ապա ինձ վերալ փորագրեց մի շարք սիրելի բառեր գիւր հայրենիքի քրանաթոր մշակին—մեծանուն Բանաստեղծ՝ Զէտին հասարակութիւնից։

Թէ որքան եռ ուրախացալ, ալդ չեմ կարող ասել։ Այժմ ես լիովին համոզուեցի, որ նորից Զէտի ձեռքը պիտի ընկնեմ։ Եւ ի՞նչ բաղտաւորութիւն, ի՞նչ ուրախութիւն։ Ահա դարձեալ կետնք, մարդիկ, աղմուկ...։ Երկու օրից ներս մտաւ մի պարոն, ձեռին բռնած վարդերից ու դափնիներից հիւսած մի մեծ պսակ։ Պարոնը հարցըց իմ մասին։

Պատրաստ է ասաց իմ նոր տէրը։

Ուրեմն պնտացըէք նրան ահա, ուղիղ այստեղ, այս վարդերի մօտ։

Ա՛խ, ի՞նչ բաղտ, ինձ առին և զետեղեցին ճիշտ ժապաւէնի մէջտեղում, չքնաղ ծաղիկների մօտ։ Ապա առան—տարան, բայց ո՞ւր, ինքս էլ չիմացալ։

Յանկարծ պսակը դրին մի բարձր ոսկեզօծ կառքէ ճակատին։ Ինչե՞ր ես տեսալ ալդ բարձրութիւնից, Աստուած իմ, ի՞նչ հանդէս։ Ալդպիսի հանդէս ես երբէք չէի տեսել և չհասկացալ թէ ի՞նչ էր ալդ։ Մտածում եմ՝ եթէ ալդ բոլորը Զէտի համար է, հապա ո՞ւր է ինքը Զէտը, ինչո՞ւ ինձ չտուալ իւր ձեռը, կարօտալի հայեացքը չձգեց ինձ վերալ։

Կառքը քիչ ժամանակից շարժուեց։ Նրան հետեւեց ահագին ժողովուրդ—մի ժողովուրդ, որին ոչ թիւ կար, ոչ համար։ Երևացին փալլուն խաչուառներ, դրօշներ, շուրջառազգեստ քահանաներ, ամենուրեք վառվուն մոմեր, վարդեր, ծաղիկներ, կնդրուկի ծուխ ևալլն։ Այն պսակը, որի վերալ ես ընկած էի, միայնակ չէր։ Նրա նման հարիւրաւորը պճնել էին գեղեցիկ կառքը։

Հանդէսը շարժում էր դէպի առաջ, բայց դէպի ո՞ւր, ալդ ես դեռ չիմացալ։

Քիչ ժամանակից լետոյ երևաց գերեզմանատունը։

Այս Բնչ է: Խնջու գերեզմանատուն, միթէ այս հանդէսը պատկանում է մի հանգուցեալի, մի մեծանուն իշխանի և գուցէ Զէտին:—Ո՞չ, ոչ, ալդ լինել չէ կարող, նա մեռած չէ, նա կենդանի է, ես դեռ պիտի տեսնեմ նրան, ոչ, եթէ թաղում են, ուրեմն անշուշտ մի անուանի իշխան են թաղում, որ ապրել է շքեղ ապարանքում, միշտ զարդարուել սկզբով ու բեհեզզով, կերակրուել համադամ խորտիկներով ու զըշապատուել անթիւ ստորադրեալներով, ալսօր էլ անշունչ դիակը արժանացել է ալսպիսի մեծարանքի ու ալսպիսի փառահեղ հանդէսների:

Վերջապէս սրտատրովի մօտեցանք գերեզմանատան: Պատկը, որի վերալ մեխուած էի, առան կառքի ճակատից:

Խուռան բազմութիւնը հաւաքուեց մի փոսի մօտ: Արտասուքը շողում էր բոլորի աչքերին, բայց Բնչ, ալդ արտասուքը անտարբեր հողն էր ծծում: Ամենքն էլ հառաջում էին, սակայն նրանց հառաջանքները քամիներն էին տանում:

Փոսի մօտ զինուած էր մի բարձր ամբիօն, ծածկուած սև թաւիշով ու ծաղիկներով: Մարդիկ բարձրացան ալդտեղ և սկսեցին հերթով ճառեր խօսել:

Խօսեցին երկար, բայց Բնչ էք կարծում, Բնչ զարմանք, ամենքն էլ գրուատում էին Զէտին, ամենքն էլ գովում, փառաբանում էին՝ անմահ, բազմաշխատ, մեծաքանքար, ազգի նահատակ, հալրենիքի սիրով ապրող և սորա նման անվերջ ածականներով:

Եւ ալդպէս բոլորը խօսելով ալդպիսի հանդէսներով հողին են լանձնում այն Զէտին, որ օրերի մեծ մասը անց էր կացնում քաղցած, ծարաւ, տիտուր և արտասուալից: Խսկ ալժմ... Ալժմ լանկարծ տեսալ ոսկեզող գագաղ զարդերով պճնուած և նրա մէջ մետաքսներով զարդարուած, պառկած Զէտը, աչքերը փակ, շըրթունքները դժողով, դէմքը դալկացած: Ա՛խ, նա ոչինչ չէր լսում, ոչինչ չէր տեսնում և ալդ բոլորը, որ անուում էր նրա համար, մի ապարդիւն խաղ էր, որին նա ոչ մի կերպ չէր կարենում մասնակցել:

Խօսիր, կանչեցի եռ: Նա ոչինչ չասաց: Նա քնած
էր լաւիտեան քնով: Նրա երեսը ծածկեցին, ապա շքե-
ղաշուք դագաղում դրին խոնաւ հողի մէջ:

Կաց, ուր ես գնում, ինձ էլ տար:

Նա չլսեց:

Հողը թափեցին նրա վերալ այնքան, որ մի փոք-
րիկ բլրակ կազմեցին և ալդ բլրակի վերալ վարդերի ու
ծաղիկների փանջակներով ահագին դէզ շինեցին:

Շուրջը վառեցին մոմեր, ծխեցին կնդրուկ, ապա
մօտը մի բարձր խաչ տնկեցին և ինձ պսակի վերալ
կախեցին խաչի վերևից: Ամենքն արտասուելով համբու-
րեցին ալդ խաչը և տխուր հառաջներով հեռացան:

Իսկ ես, ես անբաղսո միիթարուեցի միայն նրա-
նով, որ ես ի վերջոյ խաչի վերալ պահապան մնացի
իմ պաշտելի տիրոջ — իմ անմոռանալի Զէտի դամբանին:

ԱՐԾԱԿ ԹՈՂԻՄԱՆԵԱՆ

